ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» փետրվարի 2025 թվականի N 265

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 6-րդ շենքի 19 բնակարանի բնակիչ Տաթևիկ Մուրադյանի 2025 թվականի փետրվարի 03-ի թիվ 461/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի մարտի 14-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 3 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 22-րդ շենք 36 բնակարան) «Վահրադյան Կարապետ Կոկոշի» բառերը փոխարինել համապատասխան «Վայրադյան Կարապետ Կոկոշի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» փետրվարի 2025 թվականի N 264

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 15-րդ շենքի 5 բնակարանի բնակիչ Աննման Մադատյանի 2025 թվականի փետրվարի 03-ի թիվ 455/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի ապրիլի 28-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 5 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 15-րդ շենք 18 բնակարան) «Մադաթյան Աննման Գառնիկի» բառերը փոխարինել համապատասխան «Մադատյան Աննման Գառնիկի» բառերով, իսկ «Մադաթյան Հովհաննես Յուրիկի» բառերը փոխարինել համապատասխան «Մադատյան Հովհաննես Յուրիկի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» փետրվարի 2025 թվականի N 263

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 1758 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 24-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին**» թիվ 1758 որոշման 1-ին կետում «49.0» թիվը փոխարինել համապատասխան **«39.7»** թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2025 թվականի N 262

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 06-ի թիվ 516-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-015-0186-0030 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 0.80071 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է գյուղատնտեսական, իսկ գործառնական նշանակությունը՝ վարելահող:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Պիռամիդա» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2025DW4HDT ծածկագրի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» փետրվարի 2025 թվականի N 261

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 14-ի N 91-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 9-րդ շենքի թիվ 25 ոչ բնակելի տարածքը («ՄԱԿՈՒ» ռեստորանի շենք, 532▯9 քմ արտաքին մակերեսով տարածք, /ներքին մակերես 471.4 քմ/ հիմք 2003 թվականի հունիսի 02-ին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայական N 804921) 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:
2. Օրենսդրությամբ սահմանված կարգով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի նոտարական վավերացման և սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ **Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2025 թվականի N 260

ՖԼՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Պիռամիդա» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ֆլորա Մաթևոսյանի սեփականության իրավունքը 500 քմ մակերեսով 07-015-0140-0013 ծածկագրով հողատարածքի նկատմամբ, նկատի ունենալով, որ 68.1 քմ մակերեսով հողատարածքը հանդիսանում է մինչև 20 տոկոս ավել օգտագործվող հողատարածք:

2. 07-015-0140-0013 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Արզական, Ամառանոցային թաղամաս, Այգեգործական փողոց, 4-րդ փակուղի թիվ 14**»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2025 թվականի N 259

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Ալվինա Դավիդյանի կողմից ինքնակամ կառուցված 25.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023DHRVG7 ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 25.6 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 5-րդ թաղամաս 2-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 1/4*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Ալվինա Դավիդյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» փետրվարի 2025 թվականի N 258

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 1847 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 29-ի «**Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին**» թիվ 1847 որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Սահմանել, որ սեփականության իրավունքով Սերգեյ Մալխասյանին պատկանող 2-րդ թաղամասի 4-րդ շենքի թիվ 6 բնակարանին կցակառույց 35.5 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 23000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» փետրվարի 2025 թվականի N 257

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Գ. ՌՈՒՍՈՎԻ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արթուր Պողոսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 26122024-07-0113 վկայական) ***ք. Չարենցավան Գ. Ռուսովի փողոց 6-րդ փակուղի թիվ 4/2*** հասցեում գտնվող 46.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 28.6 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արթուր Պողոսյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Արթուր Պողոսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 79000 (յոթանասունինը հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 83000 (ութսուներեք հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արթուր Պողոսյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արթուր Պողոսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» փետրվարի 2025 թվականի N 256

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2/4 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Միշա Խաչբուլաղյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 21112012-07-0455 վկայական) ***ք. Չարենցավան Երիտասարդության փողոց 4-րդ փակուղի թիվ 2/4*** հասցեում գտնվող 24.96 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24.96 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Միշա Խաչբուլաղյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3 ***Միշա Խաչբուլաղյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 50000 (հիսուն հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 112000 (մեկ հարյուր տասներկու հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Միշա Խաչբուլաղյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Միշա Խաչբուլաղյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» փետրվարի 2025 թվականի N 255

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Գ. ՌՈՒՍՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Անդրանիկ Չիլինգարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 4012025-07-0125 վկայական) ***ք. Չարենցավան Գ. Ռուսովի փողոց թիվ 11*** հասցեում գտնվող 26.4 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 26.4 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Անդրանիկ Չիլինգարյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 15060 (տասնհինգ հազար վաթսուն) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Անդրանիկ Չիլինգարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 398000 (երեք հարյուր իննսունութ հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 77000 (յոթանասունյոթ հազար) դրամ՝ հողամասի գինը:

. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Անդրանիկ Չիլինգարյանի*** կողմից:

6.Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Անդրանիկ Չիլինգարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» փետրվարի 2025 թվականի N 254

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 1-րդ թաղամաս, 3-րդ շենք բնակարան 7 հասցեի բնակիչ Հովհաննես Սեյրանյանի 2025 թվականի հունվարի 31-ի թիվ 451/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի հուլիսի 19-ի «Անհատական բնակարանային շինարարության նպատակով հողատարածություններ հատկացնելու մասին» թիվ 7 որոշումը շարադրել նոր խմբագրմամբ.

«Սեյրանյան Սպարտակ Սերյոժայի-ինքը
Սեյրանյան Ջուլիետա Արշակի-կինը
Սեյրանյան Հովհաննես Սպարտակի-որդին
Սեյրանյան Տիգրան Սպարտակի-որդին
Սեյրանյան Ելենա Սպարտակի-դուստրը»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2025 թվականի N 253

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՀՐԱՇՔ», «ՉԱՆԳԱԿ», ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 33 որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի ***«Հրաշք» մսուր մանկապարտեզ*** ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

Նորիկ Արշակյան ***Սարգիս Մկրտչյան***
Գոռ Կաֆյան

2. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի ***«Չանգակ» մսուր մանկապարտեզ*** ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

Գեղամ Սահակյան ***Մանուելա Միրզաջանյան***
Անգելինա Մելոյան

3. Չարենցավան համայնքի ***Արզական գյուղի մսուր մանկապարտեզ*** ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

Համլետ Երանոսյան ***Ադանե Խաչատրյան***

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փետրվարի 03-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«31» հունվարի 2025 թվականի N 252

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՁԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 34 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, քննարկելով Չարենցավան համայնք, գ.Կարենիս , Գյուղ Մուշի փողոց, տուն 41 հասցեի բնակիչ Մեխակ Ցականյանի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 434/16 դիմումը, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գ.Կարենիս , Գյուղ Մուշի փողոց, տուն 41 հասցեի ներքոհիշյալ բնակիչների համար սահմանել աղբահանության վարձավճարի 100 % զեղչ:

Մեխակ Ցականյան
Սմբատ Ցականյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«31» հունվարի 2025 թվականի N 251

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 34 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, քննարկելով Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 7-րդ թաղամաս, 18-րդ շենք, բնակարան 28 հասցեի բնակիչ Լիաննա Ներսիսյանի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 429/16 դիմումը, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 7-րդ թաղամաս, 18-րդ շենք, բնակարան 28 հասցեի ներքոհիշյալ բնակիչների համար սահմանել աղբահանության վարձավճարի 100 % զեղչ:

Լիաննա Ներսիսյան
Մեխակ Ցականյան
Սմբատ Ցականյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2025 թվականի N 250

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎՏԱՆԳՆԵՐԻ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԹԻՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով ,***որոշում եմ.***

Ձևավորել Չարենցավան համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման (այսուհետ՝ ՎԽԿԲ) թիմ հետևյալ կազմով.

1. Արսեն Խլղաթյան - համայնքի ղեկավարի խորհրդական - ՎԽԿԲ թիմի համակարգող,
2. Երեմ Սահակյան - համայնքի ղեկավարի օգնական- ՎԽԿԲ թիմի համայնքի բնակչության հետ հարցումների իրականացման պատասխանատու,
3. Բենիկ Բալբաբյան- համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ - ՎԽԿԲ թիմի սխեմատիկ պատկերման և հարցումների պատասխանատու,
4. Վարուժան Թովմասյան - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի գլխավոր մասնագետ - ՎԽԿԲ թիմի թիրախային/ֆոկուս խմբերի հետ հարցում իրականացնելու պատասխանատու:
5. ՎԽԿԲ թիմի համակարգողը պատասխանատվություն է կրում համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գործընթացը պատշաճ կազմակերպելու և իրականացնելու հարցում
6. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«30» հունվարի 2025 թվականի N 249

ՉԱՐԵՆՑԱՎԱՆՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի N 501–Ա հրամանի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունիսի 27-ի N 275-Ա որոշման 3-րդ կետի պահանջները՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության, նյութական և մշակույթային արժեքների տարահանման, պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով. ***որոշում եմ.***

1. Ստեղծել Չարենցավան համայնքի տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ստեղծել հանձնաժողովի կազմում աշխատանքային խմբեր՝ համաձայն N2 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Չարենցավան համայնքի ղեկավարի խորհրդական ***Արսեն Խլղաթյանի*** վրա:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Չարենցավան համայնքի ղեկավարի
2025թ. հունվարի 30-ի N249 որոշման

ԿԱԶՄ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1.Սևակ Վարդանյան – հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ .
2.Երեմ Սահակյան – հանձնաժողովի նախագահի տեղակալ, համայնքի ղեկավարի օգնական.
3.Սուրեն Մուրադյան – հանձնաժողովի քարտուղար, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար .

Հանձնաժողովի անդամներ

4.Արսեն Խլղաթյան – համայնքի ղեկավարի խորհրդական.
5.Արտավազդ Ալեքսանյան –համայնքի ղեկավարի օգնական.
6.Գագիկ Երիցյան –համայնքի ղեկավարի օգնական.
7.Վարդգես Չիլինգարյան - համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական.
8.Բենիկ Բալբաբյան – համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ.
9.Արմինե Զաքարյան – համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ.
10.Աշոտ Ղազարյան- «ՀԵՑ» ՓԲԻ-ի /Գեղամա / մ/ճ, Չարենցավանի էլ. ցանցի գլխավոր ինժեներ.
11.Անդրանիկ Հովակիմյան- ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Չարենցավանի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր.
12.Գառնիկ Սահակյան- «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն.

Չարենցավան համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, հանձնաժողովի անդամներ.

13.Վահե Անդրիասյան – գ.Ալափարս
14.Լիպարիտ Մարգարյան – գ.Արզական
15.Հովհաննես Անդրեասյան – գ.Բջնի
16.Արմեն Բաղդասարյան – գ.Կարենիս
17.Դավիթ Իվանյան – գ.Ֆանտան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Չարենցավան համայնքի ղեկավարի
2025թ. Հունվարի 30-ի N 249 որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման խումբ

1. Անդրանիկ Հովակիմյան – Հասարակարգի պահպանման գծով աշխատանքներ իրականացնող՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Չարենցավանի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր.
2. Գևորգ Գևորգյան - «Նարե 99» համատիրության կառավարիչ.
3. Արարատ Մկրտումյան – «Կռունկ» համատիրության կառավարիչ.
4. Արայիկ Բաբայան - «Անդրանիկ» համատիրության կառավարիչ.

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ

1. Երեմ Սահակյան – համայնքի ղեկավարի օգնական.
2. Բենիկ Բալբաբյան – համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ.
3. Վարուժան Թովմասյան – համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի գլխավոր մասնագետ.
4. Արայիկ Բաբայան – անդամ, «Անդրանիկ» համատիրության կառավարիչ.

3. Տրանսպորտային ապահովման խումբ

1. Վարուժան Բարսամյան – համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ.
2. Աշոտ Ղազարյան – համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ.
3. Արթուր Աբգարյան- «Չարենցավան համայնքի Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն.
4. Արթուր Հարությունյան- համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ.

4. Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ

1. Արտավազդ Ալեքսանյան – համայնքի ղեկավարի օգնական
2. Նորիկ Ղազարյան – համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ.
3. Գայանե Աֆյան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հաշվառման բաժնի պետ.
4. Գառնիկ Բեգլարյան - համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջատար մասնագետ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«30» հունվարի 2025 թվականի N 248

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1582-Ն որոշման, ***որոշում եմ.***

1. Ստեղծել Չարենցավան համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Սևակ Վարդանյան – համայնքի ղեկավարի առաջին տեղակալ - հանձնաժողովի նախագահ,
Արսեն Խլղաթյան – համայքնի ղեկավարի խորհրդական - հանձնաժողովի նախագահի տեղակալ,
2) 3) Արտավազդ Ալեքսանյան – համայնքի ղեկավարի օգնական - հանձնաժողովի անդամ,
4) Գառնիկ Սահակյան - «Չարենցավան բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն - հանձնաժողովի անդամ,
5) Բենիկ Բալբաբյան – քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ - հանձնաժողովի անդամ,
6) Վարուժան Թովմասյան - քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ,
7) Գայանե Աֆյան – ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ - հանձնաժողովի անդամ,
8) Վարդանուշ Մուսայելյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ իրավաբան - հանձնաժողովի անդամ,
9) Արթուր Աբգարյան –Չարենցավանի համայնքայի «Մշակույթ» համայնքային ոչ

առևտրային կազմակերպության տնօրեն- հանձնաժողովի անդամ,
11) Չարենցավան համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ.

գ. Արզական – Լիպարիտ Մարգարյան,
գ. Ալափարս - Վահե Անդրիասյան,
գ. Բջնի – Հովհաննես Անդրեասյան,
գ. Կարենիս – Արմեն Բաղդասարյան,
գ. Ֆանտան – Դավիթ Իվանյան, հանձնաժողովի անդամներ:

2.Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված
Չարենցավան համայնքի ղեկավարի
2025 թվականի հունվարի 30-ի
N 248 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1.Ընդհանուր դրույթներ

1.Սույն աշխատակարգով սահմանվում են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի /այսուհետ հանձնաժողով/ գործողությունները, աշխատանքների կազմակերպման կարգը:

2.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:

3.Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

2.Հանձնաժողովի խնդիրները և լիազորությունները

4.Հանձնաժողովի խնդիրներն են՝

1)Կազմակերպել համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը.

2)Համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումը.

3)Համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերի ներկայացումը մարզային հանձնաժողով.

3.Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

5.Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով:

6.Հանձնաժողովի նիստեր հրավիրում է հանձնաժողովի նախագահը կամ տեղակալը՝ նախագահի բացակայության դեպքում:

7.Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա տեղակալը:

8.Հանձնաժողովի կողմից գնահատման և հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

9. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1)կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2)ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3)գնահատվում է գույքի պատճառված վնասի չափը:

10.Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

11.Տեղեկատվությունը ներառում է՝

1)դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2)տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3)դեպքի վայր մեկնած փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի կազ[illegible] անձնական տվյալները.

4)դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

12.Հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1)գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2)բնակչության գույքին հասված վնասների գնահատում.

3)ենթակառուցվածքներին հասցված վնասների գանահատում.

4)բժշկասանիտարական հնարավոր վնասների գանահատում

13. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների, ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրասպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացվ[illegible] կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն և հավանական վտանգները:

14.Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակվում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

15.Հանձնաժողովի նիստերի ժամանակ ընդունված ակտերը և կազմված արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի անդամները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2025 թվականի N 247

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի դ) կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի բ) ենթակետի և 11-րդ կետի ա) և բ) ենթակետերի, ինչպես նաև Կոտայքի մարզպետի 2013 թվականի հուլիսի 31-ի թիվ 334-Ա որոշման՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումներ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ***Սևակ Վարդանյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված
Չարենցավան համայնքի ղեկավարի
2025թ. հունվարի 30-ի N 247 որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

h/h	Կազմավորման անվանումը	Պետեր և հրամանատարներ Անուն Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հեռախոս
1	Ապաստարանների և թաքստոցների սպասարկման օղակ	Արայիկ Բաբայան	«Անդրանիկ» համատիրության կառավարիչ	093 998892
2	Փրկարարական ջոկատ	Բենիկ Բալբաբյան	Չարենցավան աշխատակազմի քաղ. շին., ճարտ., գյուղատնտ. և բնակկոմ. բաժնի պետ	055 226866
3	Կապի օղակ	Արսեն Պետրոսյան	«Թիմ տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Կոտայքի ցանցերի շահագործման ղեկավար	091 903444
4	Դիտարկման կետ	Վարդգես Չիլինգարյան	Համայնքի ղեկավարի ավագ խորհրդական	094 103800
5	Առևտրի և սննդի շարժական կետեր	Վարուժան Բարսամյան	Համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ	094 107400
6	Շարժական լիցքավորման կետեր	Արտավազդ Ալեքսանյան	Համայնքի ղեկավարի օգնական	098 376979
7	Հակահրդեհային օղակ	Տիգրան Թորոսյան	«Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար	098 133100
8	Էլեկտրա-վթարավերականգնողական խումբ	Աշոտ Ղազարյան	«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» ՄՃ «Չարենցավան» Էլ. Ցանցի ՕՇԽ խմբի ղեկավար	093 987139
9	Գազա-վթարավերականգնողական խումբ	Կարեն Գևորգյան	«Չարենցավան» ԳԳՄ-ի ՏՏ ծառայության պետ	093 977777
10	Ջրմուղ-կոյուղու-վթարավերականգնողական խումբ	Արթուր Սայադյան շահագործման	«ՎԵՈԼԻԱ ջուր» ՓԲԸ Չարենցավան տեղամասի շահագործման պետ	099 956255
11	Հետախուզական կազմավորում	Վարուժան Թովմասյան	աշխատակազմի քաղ. շին., ճարտ., գյուղատնտ. և բնակկոմ. բաժնի գլխավոր մասնագետ	098 683435
12	Վթարատեխնիկական խումբ	Արթուր Աբգարյան	Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն	098 376979

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«30» հունվարի 2025 թվականի N 246

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Չարենցավան համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել Չարենցավան համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 20-ի «Չարենցավան համայնքում աղետների ռիսկի կառավարման համակարգի ստեղծման մասին» թիվ 356 որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված N 1
Չարենցավան համայնքի ղեկավարի
«30» 01 2025 թ-ի N 246 որոշման

ԿԱԶՄ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Հակոբ Շահգալդյան/համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Սևակ Վարդանյան /համայնքի ղեկավարի առաջին տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Սուրեն Մուրադյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) Համայնքի ավագանու անդամ - Նորայր Վարդանյան,
2) Համայնքի ավագանու անդամ - Մնացական Պողոսյան,
3) Չարենցավան համայնքի բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա. Ալափարս բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահե Անդրիասյան,
բ. Արզական բնակավայրի վարչական ղեկավար՝ Լիպարիտ Մարգարյան,
գ. Բջնի բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Անդրեասյան,
դ. Ֆանտան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիթ Իվանյան,
ե. Կարենիս բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Բաղդասարյան:

4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝
հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար - Տիգրան Թորոսյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Չարենցավանի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր - Անդրանիկ Հովակիմյան.
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի առրտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ - Վարուժան Բարսամյան,
դ. կապի պատասխանատու՝ «Թիմ տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Կոտայքի ցանցերի շահագործման ղեկավար - Արսեն Պետրոսյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ «Չարենցավանի հիվանդանոց» ՓԲԸ-ի տնօրեն - Գառնիկ Սահակյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ - Սաթենիկ Բալաբեկյան,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ «ՀԵՑ» ՓԲԻ-ի /Գեղամա / մ/ճ, Չարենցավանի էլ. ցանցի տնօրեն՝ Մարտիկ Մանասյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ - Բենիկ Բալբաբյան.
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Գրիշա Հայրապետյան
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ - Արմինե Զաքարյան.

Հավելված N 2
Չարենցավան համայնքի ղեկավարի
«30» 01 2025 թ-ի N 246 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Չարենցավան համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Չարենցավանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Խորհրդի ղեկավարի որոշմամբ՝ ըստ անհրաժեշտության, գումարել համայնքի ԱՌԿ խորհրդի նիստ::

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին: